

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2016 թվականի

թիվ 38

քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) 30-րդ կետին համապատասխան եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան որոշեց.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությունը.

«Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Սահմանել, որ սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների

կառուցվածքների տեխնիկական սխեմաների մշակումը եւ արտաքին ու փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց ներառման ապահովումն իրականացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի այն դեպարտամենտի կողմից, որի իրավասության մեջ է մտնում Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

S. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 10-ի
թիվ 38 որոշմամբ

ԿԱՆՈՆՆԵՐ

«Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիր.

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «Մաքսային միությունում տեխնիկական կարգավորման մասին» թիվ 319 որոշում.

Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի «Մաքսային միության շրջանակներում միասնական փաստաթղթերի տրամադրմամբ համապատասխանության պարտադիր գնահատման (հաստատման) ենթակա արտադրանքի միասնական ցանկի մասին» թիվ 620 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին» թիվ 200 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունվարի 27-ի «Արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում տվյալների էլեկտրոնային փոխանակման կանոնները հաստատելու մասին» թիվ 5 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 29 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» թիվ 63 որոշում.

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական իշխանության մարմինների՝ միմյանց միջեւ եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ անդրսահմանային փոխգործակցության ընթացքում էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման մասին հիմնադրույթի հաստատման մասին» թիվ 125 որոշում:

II. Կիրառության ոլորտը

2. Սույն Կանոնները մշակվել են «Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակներով:

3. Սույն Կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը վերահսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

III. Հիմնական հասկացությունները

4. Սույն Կանոնների նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

«միասնական ռեեստր»՝ Միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստր, որը համապատասխանության մարմինների վերաբերյալ տեղեկություններ պարունակող եւ ազգային այնպիսի մասերից կազմված տեղեկատվական ռեսուրս է, որոնց ձևավորումն ու վարումն ապահովվում են Միության անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից.

«համապատասխանության գնահատման մարմիններ»՝ մարմիններ (այդ թվում՝ հավաստագրման մարմիններ, փորձարկման լաբորատորիաներ (կենտրոններ)), որոնք համապատասխանության գնահատում իրականացնելու համար հավատարմագրված եւ (կամ) լիազորված են Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Սույն Կանոններում օգտագործվող «ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ», «ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ», «կատարող», «ընդհանուր գործընթացի գործառնություն», «ընդհանուր գործընթացի ընթացակարգ» եւ «ընդհանուր գործընթացի մասնակից» հասկացությունները կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայով սահմանված իմաստներով:

IV. Ընդհանուր գործընթացի վերաբերյալ հիմնական տեղեկությունները

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձեւավորում եւ վարում»:

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.TS.02, տարբերակ՝ 1.0.0:

1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակն ընդհանուր ռեեստրից տեղեկությունների ձեւավորման եւ ընդհանուր գործընթացի մասնակիցներին դրանց ներկայացման մեխանիզմների կատարելագործումն է:

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

ա) ապահովել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ինտեգրված համակարգ) միջոցներով Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) լիազորված մարմիններից միասնական ռեեստրի ազգային մասերից տեղեկությունների ստացումն ու դրանց հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում.

բ) ապահովել շահագրգիռ անձանց կողմից Միության տեղեկատվական պորտալում համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունների ստացման հնարավորությունը.

գ) ապահովել անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ինտեգրված համակարգի միջոցներով միասնական ռեեստրից համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունների ստացումը.

դ) ապահովել միասնական դասակարգիչների եւ տեղեկատուների օգտագործումը:

2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.ACT.001	Հանձնաժողով	Միության մարմին, որն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում միասնական ռեեստրի ազգային մասերից վերցված տեղեկությունների հասանելիությունը, տեղեկություններն ստանում է միասնական ռեեստրի ազգային մասերից եւ ապահովում է տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում
P.TS.02.ACT.001	անդամ պետության լիազորված մարմին	անդամ պետության լիազորված մարմին, որն իրականացնում է միասնական ռեեստրի ազգային մասի ձեւավորումն ու վարումը եւ միասնական ռեեստրի ազգային մասից տեղեկությունները ներկայացնում է Հանձնաժողով, ինչպես նաեւ Հանձնաժողովից կատարում է միասնական ռեեստրից համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունների հարցումը
P.TS.02.ACT.002	շահագրգիռ անձ	իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը Միության տեղեկատվական պորտալում հարցում է կատարում եւ ստանում տեղեկություններ միասնական ռեեստրից

3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի ամբողջությունն է՝

ա) միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգեր.

բ) միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման ընթացակարգեր:

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս իրականացվում են անդամ պետությունների լիազորված մարմիններից ստացված՝ միասնական ռեեստրի ազգային մասերից տեղեկությունների հիման վրա միասնական ռեեստրի ձեւավորումն ու վարումը, ինչպես նաեւ անդամ պետությունների լիազորված մարմիններ եւ շահագրգիռ անձանց՝ միասնական ռեեստրում ներառված համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը:

Միասնական ռեեստրը ձեւավորելիս եւ վարելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված հետեւյալ ընթացակարգերը՝

միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում.

միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում:

Անդամ պետությունների լիազորված մարմիններ տեղեկություններ ներկայացնելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված հետեւյալ ընթացակարգերը՝


միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում. միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում. միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների ստացում: Նշված տեղեկությունները ներկայացվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի 2016 թվականի մայիսի 10-ի թիվ 38 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան:

Ներկայացվող տեղեկությունների ձևաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի մայիսի 10-ի թիվ 38 որոշմամբ հաստատված՝ «Եվրասիական տնտեսական միության համապատասխանության գնահատման մարմինների (այդ թվում՝ հավաստագրման մարմինների, փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների)) միասնական ռեեստրի ձևավորում եւ վարում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրություն):

Անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Հանձնաժողովի միջեւ տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է ինտեգրված համակարգի օգտագործմամբ: Շահագրգիռ անձանց կողմից միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններին հասանելիությունն իրականացվում է Միության տեղեկատվական պորտալի միջոցով:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը, այդ թվում՝ գործառնությունների մանրամասնաձև նկարագրությունը բերված է սույն Կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջև առկա կապերը եւ դրանց կատարման կարգն արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կազմված է UML (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) գրաֆիկական նոտացիայի օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:


4. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խումբը

15. Միասնական ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի կատարումն սկսվում է միասնական ռեեստրի ազգային մասում ներառելու կամ դրանում փոփոխություններ կատարելու համար տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու պահից:

Միասնական ռեեստրի ազգային մասում նոր տեղեկություններ ներառելու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը (P.TS.02.PRC.001):

Միասնական ռեեստրի ազգային մասում պարունակվող տեղեկությունների մեջ փոփոխություններ կատարելու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.TS.02.PRC.002):

16. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

17. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 2-րդ աղյուսակում:

Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.02.PRC.001	միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում եւ Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունները
P.TS.02.PRC.002	միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում եւ Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները

5. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խումբը

18. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերը կատարվում են անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից համապատասխան հարցումներ ստանալու դեպքում:

Միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման ընթացակարգերի կատարման շրջանակներում մշակվում են հարցումների հետեւյալ տեսակները՝

միասնական ռեեստրից փոփոխված տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու անհրաժեշտության գնահատման նպատակներով կատարվող՝ միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում.

միասնական ռեեստրից որոշակի ամսաթվի դրությամբ արդիական տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու նպատակներով կատարվող՝ միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում. Միասնական ռեեստրից տեղեկությունները կարող են հարցվել ինչպես ընթացիկ ամսաթվի, այնպես էլ հարցման մեջ նշված ամսաթվի դրությամբ.

միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների հարցում, որի դեպքում հարցվում են կա՛մ միասնական ռեեստրում պարունակվող տեղեկություններն ամբողջ ծավալով (հաշվի առնելով պատմական տվյալները) կա՛մ այն տեղեկությունները, որոնց ավելացումը կամ փոփոխումը տեղի է ունեցել հարցման մեջ նշված միասնական ռեեստրի ազգային մասի թարմացման ամսաթվից եւ ժամից սկսած՝ մինչեւ ինտեգրված համակարգի օգտագործմամբ հարցումը կատարելու պահը: Միասնական ռեեստրից տեղեկությունների՝ ամբողջ ծավալով հարցումն օգտագործվում է տեղեկությունները անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվական համակարգ նախնական բեռնման ժամանակ, օրինակ՝ ընդհանուր գործընթացն սկսելիս, նոր անդամ պետությանը դրանում ընդգրկելիս, խափանումից հետո տեղեկատվությունը վերականգնելիս: Այդ դեպքում միասնական ռեեստրի ազգային մասում տեղեկությունների թարմացման ամսաթիվը եւ ժամը չեն նշվում հարցման մեջ:

Հարցումն իրականացնելիս կատարվում է հետեւյալ ընթացակարգերից որեւէ մեկը՝

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում» (P.TS.02.PRC.003).


«Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» (P.TS.02.PRC.004).

«Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների ստացում» (P.TS.02.PRC.005):

Նշված ընթացակարգերը կարող են կատարվել հաջորդաբար («Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին

տեղեկությունների ստացում» ընթացակարգ (P.TS.02.PRC.003), այնուհետև՝ «Միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների ստացում» ընթացակարգ (P.TS.02.PRC.003)), կամ յուրաքանչյուր ընթացակարգը կարող է կատարվել մյուս ընթացակարգերից առանձին՝ կախված հարցումն իրականացնելու նպատակներից:

19. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի ընդհանուր սխեման

20. Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:

Միասնական ռեեստրից տեղեկություններ ներկայացնելու
 ընթացակարգերի խմբում ներառված՝ ընդհանուր գործընթացի
 ընթացակարգերի ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.02.PRC.003	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում	ընթացակարգը նախատեսված է անդամ պետության տեղեկատվական համակարգում պահվող՝ համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունները
		միասնական ռեեստրից համապատասխան տեղեկությունների հետ սինքրոնացնելու անհրաժեշտությունն անդամ պետության լիազորված մարմնի կողմից գնահատելու համար
P.TS.02.PRC.004	միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում	ընթացակարգը նախատեսված է միասնական ռեեստրում պարունակվող՝ համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունները որոշակի ամսաթվի դրությամբ ստանալու համար
P.TS.02.PRC.005	միասնական ռեեստրից փոփոխված տեղեկությունների ստացում	ընթացակարգը նախատեսված է միասնական ռեեստրում պարունակվող՝ համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ փոփոխված տեղեկությունների ստացման համար

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

21. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց մասին կամ որոնցից տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության ընթացքում, բերված է 4-րդ աղյուսակում:

Տեղեկատվական օբյեկտների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.02.BEN.001	միասնական ռեեստր	միասնական ռեեստրի ազգային մասում պարունակվող՝ համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկություններ

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

22. Տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող Հանձնաժողովի աշխատակիցները եւ պաշտոնատար անձինք տեղեկությունների ամբողջական ու ժամանակին փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար ենթարկվում են կարգապահական պատասխանատվության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ անդամ պետության լիազորված մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուներ եւ դասակարգիչներ

23. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 5-րդ աղյուսակում:

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.003	Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկ (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ)	դասակարգիչ	պարունակում է ապրանքների ծածկագրերի եւ անվանումների ցանկը, որը մշակվել է Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի եւ Անկախ պետությունների համագործակցության Արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի հիման վրա:
P.CLS.008	կապի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է կապի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը (ներդաշնակեցված է ՄԱԿ ԱԷՊԿ-ի «Communication Channel Code» դասակարգչի հետ)
P.CLS.019	աշխարհի երկրների միջազգային դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է աշխարհի երկրների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ISO 3166-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.024	լեզուների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է լեզուների ծածկագրերի եւ անվանումների ցանկը՝ ISO 639-1 ստանդարտին համապատասխան
P.CLS.048	հասցեների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է հասցեների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.053	էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների մշակման արդյունքի տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը

P.CLS.056	Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) ցանկը	տեղեկատու	պարունակում է Միության տեխնիկական կանոնակարգերի (Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի) համարների եւ անվանումների ցանկը
P.CLS.058	փաստաթղթի գործողության կարգավիճակի դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է փաստաթղթի գործողության կարգավիճակի ծածկագրերի եւ անվանումների ցանկը
P.CLS.068	տնտեսավարող սուբյեկտների նույնականացման մեթոդների տեղեկատու	տեղեկատու	պարունակում է տնտեսավարող սուբյեկտների նույնականացման մեթոդների նույնացուցիչների եւ անվանումների ցանկը
P.TS.02.CLS.001	համապատասխանության գնահատման մարմինների տեսակների դասակարգիչ	դասակարգիչ	պարունակում է համապատասխանության գնահատման մարմինների տեսակների ծածկագրերի եւ անվանումների ցանկը


VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

1. Միասնական ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերը

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգ

(P.TS.02.PRC.001).

24. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.02.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.02.PRC.001) կատարման սխեման

25. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը (P.TS.02.PRC.001) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ միասնական ռեեստրի ազգային մասում համապատասխանության գնահատման նոր մարմնի մասին տեղեկությունները ներառելիս:

26. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.02.OPR.001), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում է Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունները՝ միասնական ռեեստրում դրանք ներառելու համար:

27. Միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.02.OPR.002), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ստանում է նշված տեղեկությունները, կատարում է դրանց մշակումը եւ տեղեկությունները ներկայացրած անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում:

28. Տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.02.OPR.003), որի կատարման արդյունքներով տեղեկություններն ուղարկված անդամ պետության լիազորված մարմինը մշակում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ստացված ծանուցումը:

29. «Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.02.OPR.002) կատարելու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների հրապարակում» գործառնությունը (P.TS.02.OPR.004), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ապահովում է միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

30. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.02.PRC.001) կատարման արդյունք է համարվում համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունների ներառումը միասնական ռեեստրում եւ նշված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

31. «Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.TS.02.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի
(P.TS.02.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի
գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.02.OPR.001	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 7-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.002	տեղեկությունների ընդունում եւ մշակում՝ միասնական ռեեստրում ներառելու համար	բերված է սույն Կանոնների 8-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.003	միասնական ռեեստրում տեղեկությունների ներառման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 9-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.004	միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների հրապարակում	բերված է սույն Կանոնների 10-րդ աղյուսակում

Աղյուսակ 7

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.TS.02.OPR.001) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.OPR.001
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում տեղեկությունները ներառելիս
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն

		Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեւակերպում է միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունները, եւ դրանք ուղարկում է Հանձնաժողով՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունները ներկայացվել են Հանձնաժողով

Աղյուսակ 8

«Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.02.0PR.002) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.0PR.002
2	Գործառնության անվանումը	տեղեկությունների ընդունում եւ մշակում՝ միասնական ռեեստրում ներառելու համար
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկություններն ստանալիս («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.02.0PR.001))
5	Սահմանափակումները	պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Ներկայացված տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգի IX բաժնով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է տեղեկությունները եւ ստուգում է դրանք՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:

		Ստուգումը հաջողությամբ կատարելու դեպքում կատարողն իրականացնում է միասնական ռեեստրում տեղեկությունների ներառումը, լրացնում է
		ստացված տեղեկությունների թարմացման ամսաթիվն ու ժամը եւ տեղեկությունները ներկայացրած անդամ պետություն է ուղարկում տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում՝ նշելով տեղեկությունների ներառմանը համապատասխանող՝ մշակման արդյունքի ծածկագիրը՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:
7	Արդյունքները	միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկությունները մշակվել են, տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ուղարկվել է անդամ պետության լիազորված մարմին

Աղյուսակ 9

«Միասնական ռեեստրում տեղեկությունների ներառման արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնության (P.TS.02.OPR.003) նկարագրությունը


Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.OPR.003
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում տեղեկությունների ներառման արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը կատարողի կողմից ստանալիս
5	Մահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է ծանուցումը եւ ստուգում այն՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ներկայացված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ստացվել է

«Միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների
հրապարակում» գործառնության (P.TS.02.0PR.004) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.0PR.004
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների հրապարակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում ներառված տեղեկություններն ընդունելուց եւ մշակելուց հետո («Միասնական ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.TS.02.0PR.002))
5	Մահմանափակումները	-
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում միասնական ռեեստրում ներառված տեղեկությունների հրապարակումը
7	Արդյունքները	միասնական ռեեստրում ներառված տեղեկությունները հրապարակվել են Միության տեղեկատվական պորտալում

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների
փոփոխում» ընթացակարգ (P.TS.02.PRC.002)

32. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում»
ընթացակարգի (P.TS.02.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում:



Նկ. 5. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.02.PRC.002) կատարման սխեման

33. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.TS.02.PRC.002) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ միասնական ռեեստրի ազգային մասում համապատասխանության գնահատման մարմնի վերաբերյալ տեղեկությունները փոփոխելիս:

34. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.TS.02.OPR.005), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձեւակերպվում է Հանձնաժողով են ներկայացվում միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները՝ միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար:

35. Միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.02.OPR.006), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ստանում է նշված տեղեկությունները, կատարում է դրանց մշակումը՝ պահպանելով փոփոխությունների պատմությունը, եւ տեղեկությունները ներկայացրած անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում:

36. Ներկայացված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխության արդյունքների մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.TS.02.OPR.007), որի կատարման արդյունքներով տեղեկություններն ուղարկված անդամ պետության լիազորված մարմինը մշակում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ստացված ծանուցումը:

37. «Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.TS.02.OPR.006) կատարելու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների հրապարակում» գործառնությունը (P.TS.02.OPR.008), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն ապահովում է միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

38. «Միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.02.PRC.002) կատարման արդյունք է համարվում միասնական ռեեստրում համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունների փոփոխությունը եւ նշված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում՝ փոփոխությունների պատմությանը դիտելու հնարավորությամբ:

39. «Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.02.PRC.002) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 11-րդ աղյուսակում:

Աղյուսակ 11

«Միասնական ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.TS.02.PRC.002) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.02.OPR.005	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 12-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.006	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 13-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.007	միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցման ստացում	բերված է սույն Կանոնների 14-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.008	միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների հրապարակում	բերված է սույն Կանոնների 15-րդ աղյուսակում

«Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար
տեղեկությունների ներկայացում» գործառնության
(P.TS.02.0PR.005) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.0PR.005
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում համապատասխանության գնահատման մարմինների վերաբերյալ տեղեկությունները փոփոխելիս
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձևաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռնարկում է միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները, եւ դրանք ուղարկում է Հանձնաժողով՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները ներկայացվել են Հանձնաժողով

«Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար
տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության
(P.TS.02.0PR.006) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.0PR.006

2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկություններն ստանալիս («Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.TS.02.OPR.005))
5	Սահմանափակումները	Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Ներկայացված տեղեկությունների ձեռագրեր եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռագրերի ու կառուցվածքների նկարագրությանը: Էլեկտրոնային փաստաթղթերի (տեղեկությունների) վավերապայմանները պետք է համապատասխանեն Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգի IX բաժնով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է տեղեկությունները եւ ստուգում դրանք՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան: Ստուգումը հաջողությամբ կատարելու դեպքում կատարողը լրացնում է միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների գործողության ավարտի ամսաթիվը եւ ժամը՝ ստացված տեղեկությունների գործողության մեկնարկի ամսաթվի եւ ժամի արժեքով: Արդյունքում՝ միասնական ռեեստրում փոփոխվող տեղեկությունները պահպանվում են փոփոխությունների պատմությանը դիտելու հնարավորությունն ապահովելու համար եւ անհասանելի են դառնում հետագա մշակման համար. իրականացնում է ստացված տեղեկությունների ներառումը միասնական ռեեստրում, լրացնում է փոփոխվող տեղեկությունների թարմացման ամսաթիվն ու ժամը. տեղեկությունները ներկայացնող անդամ պետություն է ուղարկում տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցում՝ նշելով տեղեկությունների փոփոխությանը համապատասխանող տեղեկությունների մշակման արդյունքի ծածկագիրը՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:
7	Արդյունքները	միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկությունները մշակվել են, ներկայացված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ուղարկվել է անդամ պետության լիազորված մարմին

«Միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների
մասին ծանուցման ստացում» գործառնության
(P.TS.02.0PR.007) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.0PR.007
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում տեղեկությունների փոփոխման արդյունքների մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը կատարողի կողմից ստանալիս
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձևաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ընդունում է ծանուցումը եւ ստուգում այն՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	ներկայացված տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումն ստացվել է

«Միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների
հրապարակում» գործառնության (P.TS.02.0PR.008) նկարագրությունը


Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.0PR.008
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների հրապարակում

3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի ազգային մասում փոփոխված տեղեկություններն ընդունելիս և մշակելիս («Միասնական ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում և մշակում» գործառնություն (P.TS.02.0PR.006))
5	Սահմանափակումները	-
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ապահովում է միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունների հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում
7	Արդյունքները	միասնական ռեեստրում փոփոխված տեղեկությունները հրապարակվել են Միության տեղեկատվական պորտալում

2. Միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման ընթացակարգերը

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի և ժամի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգ (P.TS.02.PRC.003)

40. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի և ժամի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.02.PRC.003) կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում:



Նկ. 6. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում» (P.TS.02.PRC.003) ընթացակարգի կատարման սխեման

41. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում» (P.TS.02.PRC.003) ընթացակարգը կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ միասնական ռեեստրի վիճակի (վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի) մասին տեղեկություններ ստանալու նպատակով:

42. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում» գործառնությունը (P.TS.02.OPR.009), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմինը ձեւակերպում ու Հանձնաժողով է ուղարկում միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ներկայացման հարցումը:

43. Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնությունը (P.TS.02.OPR.010), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովն անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունները:

44. Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնությունը (P.TS.02.OPR.011), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմինը, որը միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունները ներկայացնելու հարցում է ուղարկել, իրականացնում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի ու ժամի մասին ստացված տեղեկությունների մշակում:

45. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.02.PRC.003) կատարման արդյունք է համարվում անդամ պետության լիազորված մարմնի կողմից միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացումը:

46. «Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.02.PRC.003) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 16-րդ աղյուսակում:

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.02.PRC.003) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.TS.02.OPR.009	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում	բերված է սույն Կանոնների 17-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.010	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների մշակում ու ներկայացում	բերված է սույն Կանոնների 18-րդ աղյուսակում
P.TS.02.OPR.011	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ընդունում ու մշակում	բերված է սույն Կանոնների 19-րդ աղյուսակում

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում» գործառնության (P.TS.02.OPR.009) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.OPR.009
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկություններն ստանալու անհրաժեշտության դեպքում

5	Սահմանափակումները	հարցվող տեղեկությունների ձեռնարկում ու կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռնարկների ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը ձեռնարկում է Հանձնաժողով է ուղարկում միասնական ռեեստրի վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ներկայացման հարցում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում

Աղյուսակ 18

«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնության (P.TS.02.OPR.010) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.OPR.010
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների մշակում ու ներկայացում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում ստանալիս («Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների հարցում» գործառնություն (P.TS.02.OPR.009))
5	Սահմանափակումները	Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները հարցվում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Ներկայացվող տեղեկությունների ձեռնարկում եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռնարկների ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ստուգում է ստացված հարցումը՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան:

		Ստուգումը հաջողությամբ կատարելու դեպքում կատարողը ձեռնարկում է տեղեկությունները եւ ուղարկում է հարցման պատասխանը՝ Տեղեկատվական փոխգործակցության Կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունները ներկայացվել են անդամ պետության լիազորված մարմին

Աղյուսակ 19


«Միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնության (P.TS.02.OPR.011) նկարագրությունը

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.TS.02.OPR.011
2	Գործառնության անվանումը	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին ստացված տեղեկությունների մշակում
7	Արդյունքները	միասնական ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկություններն ստացվել են

«Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգ

(P.TS.02.PRC.004)

47. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի (P.TS.02.PRC.004) կատարման սխեման ներկայացված է 7-րդ նկարում:



Նկ. 7. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգի

(P.TS.02.PRC.004) կատարման սխեման

48. «Միասնական ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.TS.02.PRC.004) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ միասնական ռեեստրից տեղեկություններ ստանալու նպատակով:

49. Առաջին հերթին կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների հարցում» գործառնությունը (P.TS.02.OPR.012), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմինը ձեւակերպում է Հանձնաժողով է ուղարկում միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման հարցումը:

50. Միասնական ռեեստրից տեղեկությունների ներկայացման հարցումը Հանձնաժողովի կողմից ստանալու դեպքում կատարվում է «Միասնական ռեեստրից տեղեկությունների մշակում եւ ներկայացում» գործառնությունը (P.TS.02.OPR.013), որի կատարման արդյունքներով Հանձնաժողովը ձեւակերպում է անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում միասնական ռեեստրից տեղեկությունները կամ հարցման պարամետրերը բավարարող տեղեկությունների բացակայության մասին ծանուցում:

